Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպում.

ՀՀ Շիրակի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության գործընթացն ամբողջությամբ իրականացվել է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ Շիրակի մարզպետի 2008 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 187 որոշմամբ սահմանված կարգի դրույթներին համապատասխան:

2018 թվականին ՀՀ Շիրակի մարզպետի մոտ կազմակերպվել և անցկացվել է թվով 2358 քաղաքացիների ընդունելություն, որից 2035-ը ՀՀ Շիրակի մարզպետարանում, 323-ը Ախուրյանի, Արթիկի, Անիի, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում:

Քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգն օրենքով սահմանված կարգով տեղադրված է մարզպետարանի պաշտոնական կայքէջում և փակցված է մարզպետարանի տեղեկատվական ցուցատախտակին:

Քաղաքացիների ընդունելություններն անցկացվել են ինչպես նախատեսված օրերին և ժամերին, այնպես էլ արտահերթ՝ մարզպետի համայնքներ կատարած այցելությունների ժամանակ: «Քաղաքացիների ընդունելության» կարգով սահմանված դրույթների խախտումներ չեն արձանագրվել:

Քաղաքացիների ընդունելությունների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանի պաշտոնական կայքէջի քաղաքացիների ընդունելություն բաժնում:

Քաղաքացիների ընդունելությունների ընթացքում բարձրացված 2358 հարցերից 323-ը վերաբերվել են բնակարանային խնդիրներին, 430-ը աշխատանքի տեղավորման, 70-ը առողջապահական տարբեր խնդիրների, 1035-ը դրամական աջակցության և 500-ը այլ հարցերին:

2. Մարզպետի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկում.

1) 2018 թվականին մարզպետի մասնակցությամբ տեղի են ունեցել 5 մամուլի ասուլիսներ: 2018 թվականի փետրվարի 20-ին տեղի է ունեցել Շիրակի մարզպետի մամուլի ասուլիսը՝ 2017 թվականին կատարված աշխատանքներրի վերաբերյալ: Ապրիլի 5-ին մարզխորհրդի

առաջին նիստի ավարտին, Շիրակի մարզպետը լրագրողներին ներկայացրել է մարզի առաջնահերթ նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրի մանրամասները: Հունիսի 1-ին ՀՀ Շիրակի նորանշանակ մարզպետ Կարեն Սարուխանյանը հանդիպել է լրագրողների հետ, ներկայացրել առաջիկա անելիքները:

2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում մարզպետի մասնակցությամբ տեղի է ունեցել երեք մամուլի ասուլիս:

Հուլիսի 10-ին հերթական մարզխորհրդի նիստից հետո Շիրակի մարզպետը հարցազրույց է տվել ԶԼՄ-ների ներկայացուցիչներին:

Օգոստոսի 19-ին Շիրակի մարզպետը ասուլիս է հրավիրել նախորդ օրը մարզում տեղի ունեցած աննախադեպ կարկտահարության հասցրած վնասների և այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ:

Հերթական ասուլիսը մարզում իրականացված աշխատանքների վերաբերյալ Շիրակի մարզպետը տվել է մարզում գործող ԶԼՄ-ներկայացուցիչներին հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած մարզխորհրդի նիստի ավարտին:

Դեկտեմբերի 26-ին տարեվերջյան մարզխորհրդի նիստի ավարտին Շիրակի մարզպետը պատասխանել է լրագրողների հարցերին:

Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանը պարբերաբար հարցազրույցներ է տվել տեղական «Շիրակ» «Ցայգ» «Գալա» հեռուստաընկերությունների, պատասխանել «Շրջապատ», «Շիրակ» շաբաթաթերթերի լրագրողներին, հյուրընկալվել «Իրականում» հաղորդաշարին:

Հանրային իրազեկման նպատակով մշտապես մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերի մասնակցությամբ կազմակերպվել են հարցազրույցներ ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ մարզպետարանի աշխատանքային ծրագրերի և այլ ընթացիկ հարցերի լուսաբանման նպատակով:

2) 2018 թվականի ընթացքում մարզպետի և մարզպետարանի աշխատակիցների կողմից պատասխանվել են լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ստացված բոլոր՝ թվով 37 գրավոր հարցումներին (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստացված): Մարզպետի և մարզպետարանի աշխատակիցների կողմից չպատասխանված հարցումներ չեն եղել:

3) Մարզպետարանի պաշտոնական կայքէջում նախապես տեղադրվել են մարզխորհրդի նիստերի անցկացման օրակարգերի նախագծերը, ԶԼՄ-ները նախօրոք տեղեկացվել են

նիստերի անցկացման օրվա և ժամի մասին և լուսաբանվել են անցկացված բոլոր մարզխորհրդի նիստերը, նիստերի արձանագրությունները տեղադրվել են կայքէջում:

4) Մարզպետարանի կայքէջում սահմանված ժամկետներում և ամբողջությամբ տեղադրվել են 2018 թվականին մարզպետի կողմից ընդունված բոլոր 400 որոշումները և 336 կարգադրությունները, մարզպետի գործունեության 2018 թվականի տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների մարզի զարգացման ռազմավարությունը և ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի 2018 թվականի աշխատանքային ծրագրերը:

5) Մարզպետարանի կայքէջում տեղադրվել են համայնքների ավագանիների կողմից 2018 թվականին ընդունված բոլոր 1318 որոշումները: